

**54. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ (ԱՄՆ)
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ**

Տարածքը՝ 9,4 մլն կմ²
Բնակչությունը՝ 313 մլն մարդ
Մայրաքաղաքը՝ Վաշինգտոն
Պետական կարգը՝ դաշնային հանրապետություն

Ամերիկայի Միացյալ Նահանգները (ԱՄՆ) *ժամանակակից աշխարհի հզորագույն պետությունն է:* Քաղաքական քարտեզում այն հայտնվել է Հյուսիսային Ամերիկայի Անկախության պատերազմի արդյունքում, երբ 1776 թ. ընդունվեց *Անկախության դեկլարացիան*, և հռչակվեց Նոր աշխարհում նոր անկախ պետության ստեղծումը:

Մինչ այդ ԱՄՆ-ի ներկա տարածքում գոյություն ունեին անգլիական 13 գաղութներ, որոնք էլ միավորվելով, զինված պայքարի միջոցով հասան անկախության՝ 1783 թ. ֆրանսիական *Վերսալ քաղաքում կնքված հաշտության պայմանագրով* Անգլիան ճանաչեց ԱՄՆ-ի անկախությունը:

Հետագայում ԱՄՆ-ը Հյուսիսային Ամերիկայի իսպանական ու ֆրանսիական գաղութների և Մեքսիկայի հաշվին ընդարձակեց իր տարածքները, իսկ 1867 թ. *Ռուսաստանից զնեց և իրեն միացրեց Ալյասկա թերակղզին:*

Այժմ ԱՄՆ-ի վարչատարածքային կառուցվածքը բաղկացած է *50 նահանգներից և 1 դաշնային օկրուգից:* Դա Կոլումբիա օկրուգն է, որտեղ գտնվում է պետության մայրաքաղաք *Վաշինգտոնը:*

Պետության ու կառավարության ղեկավարը և զինված ուժերի գլխավոր հրամանատարը երկրի նախագահն է՝ պրեզիդենտը:

Օրենսդրական բարձրագույն մարմինը՝ պառլամենտը, կոնգրեսն է: Ինչպես դաշնային բոլոր պետություններում, ԱՄՆ-ում նույնպես պառլամենտը՝ կոնգրեսը, բաղկացած է երկու պալատից: ԱՄՆ-ում դրանք կոչվում են *սենատ և ներկայացուցիչների պալատ:*

ԱՄՆ-ի նահանգներն օժտված են լայն ինքնավարությամբ: Յուրաքանչյուր նահանգ ունի իր սահմանադրությունը և օրենսդիր ու գործադիր մարմինները:

Ջարգացման բնական նախադրյալները: Հյուսիսային Ամերիկայի բնական պայմանները խիստ բազմազան են՝ անապատներից մինչև արկտիկական սառույցները և ծովափնյա դաշտավայրերից մինչև բարձրադիր լեռների հզոր համակարգերը:

1 . ԱՄՆ-ի պետական դրոշի վրա եղած 13 սպիտակ ու կարմիր շերտերը խորհրդանշում են մեկ անկախ պետության մեջ միավորված նախկին 13 գաղութները:



Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Երկրի աշխարհագրական դիրքը շատ նպաստավոր է: Երկու օվկիանոսների միջև գտնվելով՝ ԱՄՆ-ը ծովային ուղիներով կապված է Եվրոպայի, Ասիայի և մյուս աշխարհամասերի հետ: Միաժամանակ այդ տարածաշրջաններից հեռու գտնվելը ռազմավարական-պաշտպանական առումով ԱՄՆ-ին լրացուցիչ առավելություններ է ապահովում:

ԱՄՆ-ի տարածքում հայտնաբերվել են **օգրակաթ հանածոների** տարբեր տեսակների հարուստ պաշարներ: Քարածխի խոշոր հանքավայրեր կան Ապալաչներում, Նավթի և գազի հարուստ պաշարներ՝ Մեքսիկական ծոցի ափերին ու Կալիֆոռնիայում, երկաթի հանքաքարի հարուստ կուտակումներ՝ Վերին լճի շրջանում, պղնձի, ցինկի, կապարի, մոլիբդենի, ուրանի, ոսկու պաշարներ՝ Ժայռոտ լեռներում: Ոսկու և այլ մետաղների զգալի պաշարներ կան Ալյասկայում:

Գրա հետ մեկտեղ նկատելի է, որ վաղուց շահագործվող հանքավայրերից շատերն արագորեն սպառվում են, իսկ որոշ հանքատեսակների պաշարներ էլ շատ քիչ են կամ իսպառ բացակայում են: Այդպիսիք են, օրինակ, նիկելը, մանգանը, կոբալտը, քրոմիտները:

Այդուհանդերձ, ընդերքի հարստությունները բավարար նախադրյալ են ԱՄՆ-ի բազմաճյուղ արդյունաբերության զարգացման համար:

ԱՄՆ-ի տարածքի մեծ մասը գտնվում է **բարեխառն** ու **մերձարևադարձային գոտիներում**, Ֆլորիդա թերակղզու հարավը՝ արևադարձային, իսկ Ալյասկան՝ մերձարկտիկական և արկտիկական գոտիներում:

ԱՄՆ-ում, հատկապես նրա արևելյան խոնավ շրջաններում, շատ են ջրատառ **գետերը** և **խոշոր լճերը**: ԱՄՆ-ի խոշորագույն գետը **Միսսիսիպին** է, որը թափվում է Մեքսիկական ծոց և աչքի է ընկնում բավական արագ աճող դելտայով: Մեծ է Միսսիսիպիի տնտեսական, հատկապես տրանսպորտային նշանակությունը: Նրա ավազանին է պատկանում ԱՄՆ-ի տարածքի գրեթե կեսը:

Երկրի արևմտյան մասում գետեր քիչ կան. խոշոր գետերից են **Կոլորադոն** և **Կոլումբիան**, որոնք հոսում են չորային շրջաններով և ունեն ոռոգիչ և էներգետիկ նշանակություն: Ոռոգիչ դեր ունի նաև Մեքսիկայի հետ սահմանային **Ռիո-Գրանդե** գետը:

Մեծ է ԱՄՆ-ի և Կանադայի սահմանի վրա գտնվող **Մեծ լճերի** տնտեսական, հատկապես տրանսպորտային նշանակությունը: Մեծ լճերի ափերին ստեղծվել են բազմաթիվ խոշոր արդյունաբերական կենտրոններ, որոնց միջև տրանսպորտային կապն իրագործվում է այդ լճերի միջոցով:

ԱՄՆ-ի արևելյան տաք ու խոնավ կլիմա ունեցող շրջանները **անտառապատ** են: Միևնույն ժամանակ դրանք խիտ են բնակեցված, այդ պատճառով էլ անտառները հսկայական տարածքների վրա հատվել են և վերածվել գյուղատնտեսական հանդակների՝ վարելահողերի ու այգիների:

Անտառային զոնայից արևմուտք, Կենտրոնական և Մեծ հարթավայրերում, ուր տեղումների քանակը նվազում է, տիրապետող է դառնում խոտային, հացազգի բուսականությունը: Տարածվում են նախ **անտառապատահասարակները**, ապա **տափասարսանները**, որոնք համարյա ամբողջությամբ հերկվել են և օգտագործվում են հացահատիկ անեցնելու համար:

Տափաստաններից արևմուտք՝ Կորդիլիերաների միջլեռնային սարավանդներում (Մեծ ավազան, Կոլորադոյի սարավանդ), որտեղ կլիման ավելի ցամաքային է, տարածվում են փշոտ թփուտներից, օշինդրից, կակտուսներից, ազավաններից կազմված **կիսաանապատները** և **անապատները**:

Ոռոգման շնորհիվ այս տարածքների որոշ մասը նույնպես յուրացվել է գյուղատնտեսական նպատակով:

Ֆլորիդայի, Կալիֆոռնիայի և մի շարք այլ նահանգների ծովափնյա լավագույն լողափերում ստեղծվել են բազմաթիվ առողջարաններ, շքեղ հանգստյան տներ: Տարեկան միլիոնավոր տուրիստներ են այցելում բնության տեսարժան վայրերը՝ Նիագարայի ջրվեժը, Կոլորադո գետի կանյոնը (Մեծ Կանյոն) և այլն:

Բնակչությունը: Բնակչության թվով ԱՄՆ-ն աշխարհում գրավում է **երրորդ տեղը՝ Չինաստանից և Հնդկաստանից հետո**: Մյուս զարգացած երկրների համեմատությամբ ԱՄՆ-ի բնակչությունն արագ է աճում: Այն ավելանում է ոչ միայն բնական վերարտադրության, այլև մեխանիկական աճի՝ **ներգաղթի հաշվին**: Ընդհուպ մինչև 19-րդ դարի վերջերը ներգաղթողների մեջ գերակշռում էին անգլիացիները, շոտլանդացիները և իռլանդացիները: Այնուհետև զգալի թիվ կազմեցին եվրոպական այլ երկրներից,

իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ Լատինական Ամերիկայից եկածները:

Ամերիկյան ազգի ձևավորմանը մասնակցել են նաև Աֆրիկայից բերված նեգրերը և ասիական երկրներից ներգաղթածները: Դա նշանակում է, որ *ժամանակակից ամերիկյան ազգը ձևավորվել է բազմաթիվ ժողովուրդների և ռասաների միախառնումից:*

Այժմ ներգաղթը կրճատված է, և ներկայիս բնակչության 90%-ից ավելին արդեն ԱՄՆ-ում ծնվածներն են: Բնական աճը դարձել է բնակչության թվի ավելացման (տարեկան 0,9%) հիմնական աղբյուրը: Զարգացած այլ երկրների համեմատությամբ ԱՄՆ-ի բնակչության ծնելիության , հետևապես նաև բնական աճի ցուցանիշները բարձր են:

Բնակչության տարիքային կազմում գերակշռում է աշխատունակ տարիքի բնակչությունը: Զարգացած շատ այլ երկրների համեմատությամբ բնակչության ընդհանուր թվում ծերերի բաժինը փոքր է: Բնակչության սեռային կազմում գերակշռում են կանայք, որոնց թիվը 4մլն-ով ավելի է: Դա, նախ և առաջ, պայմանավորված է նրանով, որ կանանց կյանքի միջին տևողության ցուցանիշը (81 տարի), հինգ տարով բարձր է տղամարդկանց համապատասխան ցուցանիշից:

ԱՄՆ-ում ապրում են 100-ից ավելի ժողովուրդների ներկայացուցիչներ: Էթնիկ առումով առանձնանում են երեք խումբ՝ ա) ԱՄՆ-ի ամերիկացիներ կամ ուղղակի **ամերիկացիներ** (78%), դրանք ներգաղթածների սերունդներն են, որոնց մայրենի լեզուն անգլերենն է, բ) **անցման շրջանի ներգաղթյալներ**, որոնք համեմատաբար վերջերս են վերաբնակվել ԱՄՆ-ում և դեռևս չեն ընդունել այդ երկրի հպատակությունը, գ) **բնիկներ** (ինդիացիներ, էսկիմոսներ), որոնք կազմում են բնակչության 1%-ից պակաս մասը:

Հատուկ խումբ են կազմում **սևամորթ ամերիկացիները** (աֆրոամերիկացիները՝ նեգրերը), որոնց բաժինը ԱՄՆ-ի բնակչության մեջ 12% է: Նախկինում նեգր բնակչության հիմնական մասն ապրում էր Հարավում՝ այսպես կոչված «սև գոտում»: Այստեղ նրանք զբաղված էին գյուղատնտեսության մեջ: Վերջին տասնամյակներին նեգրերի կեսը վերաբնակվեց Հյուսիսի և Արևմուտքի քաղաքներում:

Սպիտակամորթները կազմում են ԱՄՆ-ի բնակչության ավելի քան 75%-ը:

Հավատացյալ բնակչության հիմնական մասը կաթոլիկներ և բողոքականներ են:

Հայերն ԱՄՆ-ում: ԱՄՆ-ում է գտնվում Ռուսաստանից հետո հայկական երկրորդ խոշոր համայնքը՝ գրեթե 1,2 մլն հայ: Հայերը զանգվածաբար ԱՄՆ են գաղթել Օսմանյան Թուրքիայում 1890-ականների հայկական կոտորածներից և 1915 թ. Մեծ եղեռնից հետո: Ներգաղթի նոր ալիք է սկսվել ՀՀ անկախության հռչակումից հետո և շարունակվում է առ այսօր (Հայաստանից և Մերձավոր Արևելքի երկրներից):

Հայերի ամենահոծ զանգվածը բնակվում է Կալիֆոռնիա նահանգում՝ *Լոս Անջելես* քաղաքում և նրա մերձակայքում: Զգալի թվով հայեր են ապրում նաև *Մասաչուսեթս, Միչիգան, Նյու Յորք և այլ նահանգներում:*

Հայերի սոցիալական կազմը խիստ խայտարեղեա է՝ ծառայողներ, մանր ու խոշոր ձեռնարկատերեր, առևտրականներ, արհեստավորներ, գիտնականներ, բժիշկներ:

ԱՄՆ-ում գործում է 100-ից ավելի հայկական եկեղեցի, հրատարակվում է մոտ 150 անուն թերթ և պարբերական: Այժմ համայնքում գործում են բազմաթիվ ազգային կազմակերպություններ, այդ թվում՝ *Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ):*



Հայերի միության շենքը
Լոս Անջելեսում

ԱՄՆ-ում են ապրել և ստեղծագործել աշխարհահռչակ գրող *Վիլյամ Սարոյանը*, հայտնի կինոռեժիսոր *Ռուբեն Մամուլյանը*, աշխարհահռչակ դերասանուհի և երգչուհի *Շերելին Սարգսյանը (Շեր)*, գիտության և արվեստի այլ հայտնի հայազգի գործիչներ:

ԱՄՆ-ի բնակչության միջին խտությունը (ՅՅմարդ/կմ²) ցածր է զարգացած շատ երկրների համեմատությամբ: Այն բարձր է երկրի արևելյան՝ Ատլանտյան և Մերձլճային նահանգներում, միևնույն լեռնային նահանգներում նոսր է և կազմում է բնդամենը 2-3 մարդ/կմ², իսկ Ալյասկայում՝ 1 մարդ յուրաքանչյուր 5 կմ²-ի վրա: ԱՄՆ-ին հատկանշական են ցրված գյուղական տարաբնակեցման ձևերը:

Քաղաքները: Ամերիկացիների ավելի քան 4/5-ն ապրում է քաղաքներում: **Շատ են խոշոր և գերխոշոր քաղաքները:** Հայտնի են հատկապես *Նյու Յորքը, Չիկագոն, Լոս Անջելեսը, Ֆիլադելֆիան, Դետրոյթը:* Դրանցից յուրաքանչյուրում բնակվում է մի քանի միլիոն մարդ, իսկ Նյու Յորքում՝ 8 մլն:

Երկրի քաղաքաբնակների մեծ մասը կենտրոնացած է **քաղաքային խոշոր ագլոմերացիաներում:** Ընդ որում, ագլոմերացիայի եզրամասերում բնակչությունն ավելի մեծաթիվ է և ավելի արագ է աճում, քան կենտրոնական քաղաքում: Դա արդյունք է այն բանի, որ ագլոմերացիայի կենտրոնական քաղաքից կատարվում է բնակչության արտահոսք է դեպի արվարձանները: Այդ երևույթը, որը հայտնի է *սուբուրբանիզացում* անունով, թեև տարածված է արդյունաբերապես զարգացած բոլոր երկրներում, սակայն առավել մեծ չափերի է հասել ԱՄՆ-ում:

Սուբուրբանիզացված շրջաններին հատուկ է կառուցապատումը ցածրահարկ առանձնատներով: Ներկայումս այդպիսի առանձնատներում ապրում է ամերիկյան բնտանիքների ճշող մեծամասնությունը: Նման պայմաններում մեծ չափերի են հասնում բնակչության ճոճանակային ուղևորությունները, երբ արվարձանների բնակիչներն առավոտյան քաղաք աշխատանքի մեկնելով և

երեկոյան տուն վերադառնալով, տասնյակ կիլոմետրեր ճանապարհ են կտրում:

Քաղաքային ագլոմերացիաների միաձուլումից գոյանում են *մեգալոպոլիսներ*: ԱՄՆ-ում ձևավորվել են ***երեք մեգալոպոլիսներ՝ Մերձարլանդյան կամ Բոսվաշ, Մերձլճային և Մերձհատաղաօվկիանոսյան***: Դրանցից խոշորագույնը՝ Բոսվաշը (մոտ 50 մլն մարդ), ձգվում է Ատլանտյան օվկիանոսի առափնյա հատվածով՝ Բոստոնից մինչև Վաշինգտոն, և ***ընդգրկում է մոտ 40 քաղաքային ագլոմերացիա***:

ԱՄՆ-ի քաղաքների շարքում առանձնանում է *Վաշինգտոն* մայրաքաղաքը, որը թե՛ բնակչության թվով, թե՛ տնտեսական հզորությամբ բազմիցս գիջում է երկրի խոշորագույն քաղաքներին: Բայց, դրան հակառակ, բացառիկ է նրա՝ որպես աշխարհի հզորագույն տերության մայրաքաղաքի քաղաքական, մշակութային ու գիտական դերը: